Սուրեն Օհանյան
Եվրասիա միջազգային համալսարանի ռեկտոր, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Իրինա Բաբայան
Եվրասիա միջազգային համալսարանի ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՌԵԳԻՈՆԱԼ-ՓՈՒԼԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԲՈՒՀԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Հոդվածագիրները գտնում են, որ միջազգային համագործակցության տեսանկյունից բարձրագույն մասնագիտական կրթական համակարգը հայտնվել է երկակի իրադրության մեջ: Մի կողմից, ի հայտ են եկել բազմաթիվ դժվարություններ՝ ֆինանսական, քաղաքական, ազգայնական և այլն, որոնք անկայուն իրավիճակ և դժվարություններ են առաջացրել յուրաքանչյուր երկրում, մյուս կողմից, միջազգային համագործակցությունը դիտվում է որպես օբյեկտիվ անհրաժեշտություն:

Կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացման նպատակով հոդվածում որպես համագործակցության ռեգիոնալ զարգացման նախապայման, դիտվում է բուհերի գործունեության մասնագիտացման խորացումը և կրթական ծրագրերի փուլային կազմակերպման եղանակով ռեգիոնալ համագործակցության զարգացման տեսական հիմնահարցերը:

Հոդվածը նպատակ ունի համատեղ ու կրկնակի դիպլոմի, ուսանողական և դասախոսական կազմի փոխանակումների, համատեղ հետազոտական ռեգիոնալ և միջազգային ծրագրերը դիտարկել տնտեսագիտական և տնտեսաաշխարհագրական գիտությունների շրջանակներում լայնորեն կիրառվող

մասնագիտացման և կոոպերացման տեսությունների համատեքստում:

Հիմնաբառեր. ռեգիոնալ ինտեգրացիա, մասնագիտացման տեսակներ, փուլային մասնագիտացում, փուլային ենթամասնագիտացում, կրթական ծրագրի տարանջատում:

Համաշխարհային տնտեսության՝ աշխատանքի միջազգային բաժանման և ռեգիոնալ ինտեգրացման խորացման հետևանքով ի հայտ են եկել նոր ու բազմաթիվ գործընթացներ, որոնք, ներթափանցելով յուրաքանչյուր երկրի տնտեսության ոլորտները, բազմաթիվ փոփոխություններ են առաջացրել: Մեկ երկրի տնտեսական ոլորտներն արդեն ուղղակիորեն կախված են մեկ այլ երկրի կամ երկրների խմբի տնտեսության ինտեգրմանը մասնակցող ոլորտների զարգացման մակարդակից: Ընդ որում, որքան բարձր է այդ ոլորտների զարգացման մակարդակը, այնքան մեծ է նրանց միջազգային ինտեգրման ներուժը և փաստացի ինտեգրվածության մակարդակը: Դրա հետևանքով ինտեգրացիան հանգեցնում է երկրների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների համահարթեցման, տնտեսության կառուցվածքային փոփոխության, որակական ու քանակական զանազան տեղաշարժերի: Ավելին, յուրաքանչյուր երկիր աստիճանաբար ձևավորում է տնտեսության նոր կառուցվածք՝ միջոլորտային նոր համամասնություններով, զարգացման ներուժով՝ հորիզոնական համագործակցությանը զուգահեռ զարգացնելով ուղղահայաց, առավել ինտենսիֆիկացված փոխգործակցությունները (8):

Նշված գլոբալ գործընթացներից անմասն չի մնացել նաև կրթական համակարգը՝ որպես երկրների սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող գլխավոր ներուժի, այն է՝ որակավորված աշխատուժի վերարտադրությամբ զբաղվող մի բացառիկ բնագավառի: Մասնավորապես, բարձրագույն մասնագիտական կրթական գործունեությամբ պայմանավորված և զուգահեռաբար, կոոպերացված գիտական հետազոտությունների իրականացման նպատակով ընթացող միջպետական և միջբուհական կապերը հատել են միջազգային սահմանները և որակական ու քանակական փոփոխություններ առաջացրել ինտեգրացմանը մասնակից երկրներում (5): Քիչ չեն նաև ինտեգրացման հետևանքով բուհերի կառուցվածքային փոփոխության, նոր մասնագիտությունների առաջացման դեպքերը (6):

Համաշխարհային գլոբալացման նպատակով ընթացող գործընթացների ինտենսիվացումը մի կողմից, և տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած բացառիկ հնարավորությունները մյուս կողմից յուրաքանչյուր երկրի բարձրագույն մասնագիտական կրթական հաստատությունների համար զարգացման նոր նախադրյալներ են ստեղծել: Դրան նպաստել է նաև յուրաքանչյուր երկրում կրթական համակարգի նկատմամբ դրսևորվող հետևողականությունը՝ այն դիտարկելով որպես տնտեսության զարգացման գլխավոր գործոն: Կրթական համակարգի փոփոխության վրա ազդել են նաև միջազգային տարածքային տնտեսական միավորումների ստեղծումը և դրանցում հետզհետե նոր անդամ երկրների ընդգրկումը: Նկատենք

նաև, որ որոշ երկրների՝ զարգացման առանձնապես բարձր վարկանիշ ունեցող և ավանդաբար կրթական նոր եղանակ ստեղծող համալսարանները, իրենց հերթին զարգացման միջուկ հանդիսանալով, դրականորեն նպաստել են կրթական տարածքային ինտեգրացման ցանցի ձևավորմանը (1):

Մեր օրերում, թեկուզև դեռևս նվազ մասշտաբներով, ուսանողների փոխանակումները, դասախոսների վերապատրաստումները, համալսարանական համատեղ կրթական և գիտահետազոտական միջազգային ծրագրերի իրականացումը և այլն դարձել են անհրաժեշտություն, որոնց անտեսումը հավասարազոր է այս համակարգի ինտենսիվացման տեմպերի անկմանը, տնտեսական զարգացման բոլոր բնագավառներում տեխնիկատնտեսական և ֆինանսական ցուցանիշների վատթարացմանը: Հենց այս նկատառումներից ելնելով էր, որ կրթական և գիտական համագործակցության միջազգային մասշտաբներով զարգացման նպատակով ընդունվեց Բոլոնիայի հռչակագիրը (3): Մեր կարծիքով՝ կրթական համակարգի զանազան համագործակցային բնույթի զարգացումներն ու փոփոխությունները այսուհետ պետք է համարել որպես յուրաքանչյուր երկրի տնտեսության բոլոր ոլորտներում ընթացող բարեփոխումների բաղադրամասեր: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում բացահայտել և կատարելագործել ինտեգրացման բովանդակությունը և մշակել որոշակի տեսական հիմնադրույթներ՝ դրանց ոչ միայն ներկայիս ձևաչափերով համակարգման և իրականացման, այլև հետագայում կանոնակարգված զարգացման խորացման և մասշտաբայնության ընդլայնման տեսակետից:

Հիշյալ խնդրի նման ձևակերպումը հիմնավոր է, որովհետև գործնականորեն ընթացող կրթական համագործակցությունը ներկայումս տարերային բնույթ է կրում: Այն պայմանավորված է յուրաքանչյուր բուհի նախաձեռնողական կարողություններով, այս կամ այն բուհի միջազգային դրամաշնորհային ծրագրերից օգտվելու հնարավորություններով: Եվ հաճախ լավագույն համագործակցային միջազգային ծրագրերի մի մասը զանազան սուբյեկտիվ պատճառներով չի իրականացվում: Ի հայտ են գալիս արհեստական բարդություններ, անհամապատասխանություններ ու անհիմն պահանջներ, որոնք նույնպես բացասական ներգործություն են ունենում այս կամ այն, հաճախ նաև հաջողակ նախագծերի իրականացման պարագայում: Արդյունքում առաջադեմ համագործակցային միջազգային կրթական ծրագիրը կարող է ձախողվել, ինչը նույնպես դանդաղեցնում կամ սահմանափակում է հաջողակ ակնկալիքով կրթական ծրագրի իրագործման նախաձեռնությունը: Այլ կերպ ասած, միջազգային կրթական և գիտական միջբուհական համագործակցությունը դեռևս համակարգված չէ. կայուն զարգացման և արդյունավետության բարձրացման գործոնների շարքում չի դարձել առաջնային բաղադրամաս, կրում է տարերային բնույթ: Ուստի խնդրի լուծման տեսական-մեթոդական համակարգի մշակման անհրաժեշտություն է առաջացել:

Ավելացնենք նաև, որ այս եզրակացությունը հիմնավոր է, որովհետև ներկայումս ընթացող համագործակցային գործընթացները հաճախ իրա-

վիճակային են. կրթական լավագույն փորձը, կախված լինելով առանձին անհատներից և գիտական խմբերից, հաճախ արտահայտվում է համալսարանական օջախներով և մյուս երկրներում տարածման անհրաժեշտություն չի գտնում: Պատճառն այն է, որ տեսականորեն դեռևս բացահայտված և կանոնակարգված չեն համագործակցության նախադրյալները. բնականաբար նաև ռեգիոնալ համագործակցությունը չի դարձել օրինաչափություն կամ անհրաժեշտություն: Այս խնդիրը լուծման տեսակետից բավականին բարդ է: Փորձենք բացահայտել այն մեթոդական հաջորդական քայլերը, որոնք միջազգային միջբուհական համագործակցությունը կկայունացնեն և կդարձնեն կառավարելի գործընթաց:

Դրա համար նախ և առաջ կպահանջվի, ըստ մասնագիտությունների, քարտեզագրել ամենազարգացած համալսարանները (օգտվելով նաև միջազգային հեղինակավոր ռեյտինգային գնահատման համակարգերից), բացահայտել ինտեգրման համար անհրաժեշտ պայմանները և ինտեգրման փաստացի ձևն ու տեսակը, ինչպես նաև ռեսուրսների ապահովվածության աստիճանը և հատկապես՝ համալսարանի պատրաստակամությունը՝ կրելու ինտեգրող դերակատարություն:

Բացի վերը նշվածից, անհրաժեշտություն կզգացվի նաև բացահայտել տվյալ մասնագիտական-կրթական ծրագրի միջազգայնացման համար առավել հայտնի կամ բովանդակային առումով գրավիչ , պահանջվող որակական նոր հատկանիշներ ունեցող, վերջնական ելքային բարձր արդյունքներ ապահովող, ուսուցման ժամանակակից եղանակներով, որակավորված դասախոսական կազմով և գիտնական-մանկավարժների ապահովվածությամբ և այլ բնութագրումներով համալսարանները՝ որպես ինտեգրացման պոտենցիալ կենտրոններ (8):

Խնդիրը լուծելու համար հավանաբար անհրաժեշտ կլինի նաև կանոնակարգել ֆինանսակազմակերպական և ժամանակային բնույթի հարցերը, հիմնավորել ինտեգրման գործընթացի կառավարման բովանդակային և տեսական օրինաչափությունները, դրանց հստակությունն ու հասանելիությունը[1]:

Հավելենք նաև, որ յուրաքանչյուր մասնագիտական-կրթական ծրագիր ներկայումս ուսուցման որակի ապահովման տեսակետից այնքան է բարդացել, ուսուցման որակի նկատմամբ այնպիսի պահանջներ են առաջադրվում, որոնք հաճախ մեկ համալսարանի ներուժով հնարավոր չէ բավարարել: Պայմանավորված նոր դասընթացների ներդրմամբ, դրանց որակյալ մատուցման բարդություններով, բացառիկ մեծ նշանակություն ունեցող վերջնական արդյունքների ապահովման անհրաժեշտությամբ, մասնագիտական գործնական հմտությունների զարգացման տարածքային դրսևորումներով և այլ հանգամանքներով՝ միջբուհական միջազգային համագործակցությունը դառնում է պարտադիր կամ անհրաժեշտ: Կրթական հորիզոնական կապերն անհրաժեշտաբար դուրս կգան այս կամ այն մասնա-

1 Որպես հեռանկարային ռազմավարական ծրագիր՝ չի բացառվում նաև, օրինակ, ԵՄ կամ ԵԱՏՄ երկրներում ստեղծել կրթական ծրագրերի կուտակման մի կենտրոն (բանկ), կատարել նախնական փորձաքննություն՝ հետագայում կանոնակարգելու համար տարածքային համագործակցությունը:

գիտությամբ (կամ մասնագիտությունների ու մասնագիտացումների խմբերով) ամենազարգացած համալսարաններից և կինտեգրվեն դրա կարիքն ունեցող տարբեր համալսարանների հետ: Այս գործընթացը կարող է ընթանալ ինչպես երկրների միջև, այնպես էլ մեկ երկրի ներսում[1]:

Վերոհիշյալ խնդիրների լուծման նպատակով ինչ մեթոդական համակարգ ենք մենք ենթադրում. ինչպես արտադրական ոլորտներում մասնագիտացումը, աստիճանաբար խորանալով, հանգեցնում է նոր ու միմյանցից տարանջատ ձեռնարկությունների առաջացման, այնպես էլ կրթական ծրագրերի իրագործումը կարող է ենթարկվել այդ օրինաչափությանը: Այսպես, եթե նախկինում ամբողջ արտադրական գործընթացները կատարվում էին մեկ ձեռնարկության մեջ, ապա այժմ արտադրական հաջորդական շղթան բաժանվում է առանձին փուլերի, և ամեն մի փուլ տեղաբաշխվում է այն ձեռնարկությունում, որտեղ այդ փուլի կատարման պայմաններն առավել բարենպաստ են: Արտադրական ոլորտներում ձեռնարկությունների մասնագիտացումը խորանալով ներկայանում է առարկայական, դետալային և տեխնոլոգիական (փուլային) ձևերով: Հետևաբար, համալսարանների կրթական ծրագիրը, ըստ երկրների, նույնպես կարող է ներկայանալ ուսուցման գործընթացի փուլային տարանջատմամբ և համապատասխան համալսարաններում կազմակերպվելու ձևերով: Եթե զուգահեռներ անցկացնենք, ապա ամբողջական կրթական ծրագիրը կարելի է դիտարկել որպես առարկայական մասնագիտացման փուլ, իսկ մասնագիտացումները՝ որպես դետալային փուլեր: Առանձին, հատկապես նոր մշակված ու ընդգծված զարգացում ունեցող մասնագիտացման դասընթացները փուլային ենթամասնագիտացման տարատեսակ են: Նման առանձնացման գիտամեթոդական իմաստը նրանում է, որ կան համալսարաններ, որոնք, արտադրության հետ սերտաճելով, առանձնանում են իրենց տեսական ու գործնական պատշաճ մակարդակով, որին իր նպաստն է բերել նաև գիտամանկավարժական և համապատասխան ուսումնագիտական հետազոտական ներուժը: Կրթական ծրագրի իրականացման հաջորդական շղթան ներկայանում է առանձին փուլերով ու առանձին մասնագիտական դասընթացներով (դասընթացների խմբերով), որոնցից յուրաքանչյուրը ամենազարգացած մակարդակով կարող է ներկայացված լինել ամենատարբեր երկրների համալսարաններում: Ամեն մի կրթական ծրագիր, ներկայացված լինելով առանձին դասընթացներով (փուլերով), կարող է լավագույն ձևով իրականացվել տարբեր համալսարանների՝ միմյանց հետ ինտեգրման և կոոպերացման միջոցով, որոնցում կարող են կազմակերպել կրթական ծրագրերի առանձին փուլերը: Ընդ որում, ամեն մի կրթական փուլ կարող է կազմակերպվել այն երկրում կամ համալսարանում, որտեղ տվյալ փուլի կազմակերպման նախադրյալները, օրինակ՝ դասախոսական կազմ, լաբորատորիաներ, տեսական և գործնական ուսուցման ակնառու փորձառություն և այլն, ներկայացված են լավագույն կամ ամենաբարձր չափանիշնե-

1 Ծավալային նկատառումով հոդվածում միջմայրցամաքային կամ զարգացող երկրներից դեպի զարգացած երկրներ կրթական նպատակային միգրացիաների հարցերը քննարկված չեն:

րով, իսկ մյուս փուլերի համար՝ ոչ այնքան:

Մատնանշենք մեկ հանգամանք ևս, որը կրթական ծրագրի տարանջատման և տարբեր երկրների համալսարաններում իրագործման անհրաժեշտություն է առաջացնում: Համալսարան-տնտեսություն փոխադարձ կապի արդյունավետությամբ պայմանավորված՝ առաջանում են ամենազարգացած ծրագրերով համալսարաններ, որոնք այլ համալսարանների դասախոսներին ու ուսանողներին ձգում են դեպի իրենց: Մասնագիտական ամբողջական կրթական ծրագիրը ներկայանում է առանձին փուլերով, այն է՝ տարբեր համալսարաններում ուսանողական փոխանակումներն ու դասախոսների վերապատրաստումները կամ վարպետության դասախոսությունները արդեն առավելագույն չափով են միտված լինում լավագույն արդյունքին, ուսուցման և վերապատրաստման բարձր արդյունավետության ապահովմանը:

Առանձին փուլերով ընթացող և նպատակային բովանդակություն ունեցող ուսանողական փոխանակումները, վերապատրաստումները և համատեղ հետազոտությունները, փաստորեն, կդառնան բավականին արդյունավետ: Տեղի կունենա առավել ինտենսիվ ու արտադրողական գործունեություն: Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ միջազգային աշխատաշուկայում հայտնի ու մեծ պահանջարկ ունեցող դասախոս- գիտնականների մասնագիտական ներուժը կօգտագործվի նպատակային. ավելի մեծ թվով ուսանողներ ու դասախոսներ կօգտվեն նրանց որակյալ ծառայություններից: Մասնագետ-գիտնականները կգործեն առավել ազատ, առանց որևէ սահմանափակումների՝ իրացվելով մեծ մասշտաբներով, էլ ավելի բարձրացնելով դասախոս-գիտնականի մանկավարժական և գիտական ներուժը: Այսպիսով, արտադրության կազմակերպման ժամանակակից ձևերը՝ հատկապես մասնագիտացումը և կոոպերացումը, իրենց բոլոր երեք ենթաձևերով կարող են դրսևորվել նաև կրթական ծրագրերի առավել արդյունավետ ու օգտակարությամբ իրականացվելիս:

Միջբուհական համագործակցության խորացման, բուհերի մասնագիտացման և կոոպերացման, կրթական ծրագրերի փուլային իրագործման համար կարելի է առանձնացնել հետևյալ համալսարանները.

- մասնագիտական-կրթական ծրագրի մշակման և կառավարման համար որպես միջազգային կամ ներպետական մասշտաբով ընթացող փուլային մասնագիտացման և միմյանց միջև կոոպերացման համար կրթական հարթակներ (նախադրյալներ) կարող են հանդիսանալ ավանդաբար բարձր վարկանիշ ունեցող և ուսուցման արդյունավետությամբ ճանաչում ստացած համալսարանները, որտեղ կարող են կազմակերպվել առավելապես տեսական դասընթացներ և ավարտական ու մագիստրոսական թեզերի կատարմանը միտված հետազոտությունների փուլերը,
- որոնք առանձնապես մասնագիտացել են այս կամ այն կրթական ոլորտի վերաբերյալ տեսական դասընթացների մշակման մեջ, ստեղծել են այդ ուղղությամբ գիտամեթոդական բարձր համակարգ

ունեցող դպրոցներ, որոնցում ընդգրկված են բնագավառը ներկայացնող հայտնի մասնագետներ: Այս համալսարանները կարող են դիտարկվել նաև որպես դասախոսական կազմի վերապատրաստման կենտրոններ,

- նախամասնագիտական ուսուցման դասընթացներով (ըստ ուղղությունների) առանձնապես հայտնի համալսարաններ, որտեղ, մյուսների հետ համեմատած, զգալի բարձր է մասնագիտական ուսուցման նախապայման հանդիսացող դասընթացների ուսուցման արդյունավետությունը,
- նախամասնագիտացման դասընթացներով առանձնապես հայտնի համալսարաններ, որոնք գտնվում են հատկապես սոցիալ-տնտեսական զարգացած մակարդակ ունեցող երկրներում և, որպես կանոն, արձագանքում են գիտատեխնիկական առաջադիմությամբ պայմանավորված որակական փոփոխություններին,
- երկրների տնտեսության այս կամ այն ոլորտի մասնագիտության զարգացմամբ պայմանավորված համալսարաններ, որոնք առանձնանում են հատուկ մասնագիտական դասընթացներով, ուսումնական և հետազոտական մեծ ներուժով: Այս համալսարանները կարող են հանդիսանալ կրկնակի դիպլոմի և համատեղ կրթական ծրագրերի իրագործման համար գործընկերության կենտրոններ,
- հետազոտական գիտամանկավարժական կազմի մեծ ներուժ ունեցող համալսարաններ, որտեղ առանձնապես արդյունավետ է կազմակերպել ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի հետազոտությունն ու պաշտպանության նախապատրաստումը (7):

Որակյալ մասնագետի պատրաստման (վերարտադրության) գործընթացը բավականին բարդ է և կախված է ուսումնական, արտադրամասնագիտական և նախաավարտական-մասնագիտական պրակտիկաների կազմակերպման հնարավորություններից (4): Վերջիններս առավել պահանջվող մակարդակով ներկայացված են դարձյալ զարգացած երկրներում գործող համալսարաններում, որոնք հայելային կարգով արտահայտում են տվյալ երկրի տնտեսական իրադրությունը: Հետևաբար, եթե այն երկիրը, որտեղ առանձնապես զարգացած է որևէ նախընտրելի մասնագիտություն, նաև՝ դրան համարժեք համալսարաններ, ապա վերջիններս լավագույն հարթակներ կարող են դիտվել այս կամ այն փուլային մասնագիտացմանը վերաբերող միջազգային պրակտիկաների կազմակերպման համար:

Նկատենք, որ այս կամ այն զարգացած տնտեսություն ունեցող երկրի ուսումնական հաստատությունները ունենում են նաև բարձր վարկանիշ,որոնց մասնագիտությունները մեթոդական առումով ձեռք են բերում ինտեգրող հատկանիշներ:

Տնտեսության զարգացած ոլորտների և բուհերի համապատասխան մասնագիտությունների միջև անմիջական կապի ու փոխպայմանավորվածության հետևանքով տնտեսության մասնագիտացմանը զուգընթաց տեղի է ունենում բարձրագույն կրթական ծրագրերի ընտրություն, որը նույնպես

նման տնտեսության ոլորտների մասնագիտացում է: Կրթական ծրագրերի մասնագիտացումը հաճախ ուղեկցվում է մասնագիտություններով՝ դարձյալ տնտեսության պահանջներին համարժեք: Եվ այս հատկանիշներն այլ երկրների բուհերում կարող են բացակայել, ուստի տվյալ մասնագիտությունը համագործակցված եղանակով կայանալու անհրաժեշտություն է առաջադրում (2):

Մեր կարծիքով՝ արտադրականից կրթական ոլորտ հասարակական արտադրության ձևերի, մասնավորապես՝ մասնագիտացման և կոոպերացման սկզբունքներով կրթական ծրագրերի կառավարման գործընթացը պետք է տեղի ունենա ոչ թե պարզագույն նմանակման հատկանիշներով, այլ՝ կայուն փոխպայմանավորված համաձայնագրերով, խորը գիտամեթոդական բացահայտումներով և հիմնավորումներով, ընդգծված կարգով արտահայտված լինեն կրթական ծրագրերի բնույթն ու յուրահատկությունները, ակնառու առավելություններն ու արդյունավետությունը:

Կրթական ծրագրի ռեգիոնալ դիֆերենցիացիան (ներպետական և միջազգային) և ինտեգրացիան կարող են ընթանալ նաև առանձին մասնագիտական դասընթացների կազմակերպման շրջանակներում, որը, մեր կարծիքով, կրթական ծրագրի զարգացման առավել հեռանկարային ուղղություն է:

Գրականության ցանկ

1. Ալեքսանյան Հ., Ծերունյան Վ., Հանրային կառավարման ինտեգրման ուսումնական ծրագրեր, «Էդիթ Պրինտ», Երևան, 2010
2. Բուդաղյան Ա., Գրիգորյան Ա., Արդյունահետ դասընթացների և կրթական ծրագրերի մշակում, Երևան, 2017
3. Երիցյան Ս., Ճուղուրյան Ա., 100 հարց և պատասխան Բոլոնիայի գործընթացի մասին, Էդիթ պրինտ, Երևան 2007
4. Էնտոնի Ս., Մարտին Մ., Որակի արտաքին ապահովում, ուղեցույց բարձրագույն կրթության մենեջերների համար, Երևան, 2008
5. Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք: ԵՊՀ, Երևան, 2009թ.
6. Ղուկասյան Ն., Գասպարյան Ռ., Մելիքյան Ս., Մելիք-Բախշյան Մ., Կրեդիտային համակարգին անցած բուհերի փորձերի վերլուծություն և արդյունքների ընդհանրացում, Երևան, 2007
7. Սարգսյան Ց., Բուդաղյան Ա., ՀՀ հետբուհական կրթության վերակառուցումը Բոլոնիայի գործընթացի համատեքստում: Բարեփոխումների ռազմավարության հիմնադրույթներ, Երևան, 2007
8. Օհանյան Ս., Բաբայան Ի., Համալսարանական կառավարման բարելավման մի քանի հարցեր: Բանբեր, ԵՄՀ, 2017, N 1, էջ 84–92
9. Hans De Wit and Philip G. Altbach, Dramatic Instability in International Higher Education, August 11, 2018
10. Philip G Altbach, Continuing dilemmas for higher education in 2018, 12 January 2018 Issue No:488

11. Philip G. Altbach, The complexities of 21st Century brain exchange

Сурен Оганян
Ректор Международного университета Евразия
Доктор географических наук, профессор
Ирина Бабаян
Проректор по учебной и научной работе
Международного университета Евразия

РЕГИОНАЛЬНАЯ ПОЭТАПНАЯ ОРГАНИЗАЦИЯ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ ПРОГРАММ ВЫСШЕГО СПЕЦИАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ КАК ПРЕДПОСЫЛКА ИНТЕРНАЦИОНАЛИЗАЦИИ ВУЗА

С точки зрения международного сотрудничества система высшего профессионального образования оказалась в двоякой ситуации. С одной стороны, возникло множество трудностей: финансовых, политических, националистических и т. д., которые вызвали нестабильность и сложности в каждой стране. С другой стороны, международное сотрудничество рассматривается как объективная необходимость.

В статье, в целях повышения эффективности образовательных программ, в качестве предпосылок развития регионального сотрудничества рассматриваются теоретические вопросы развития регионального сотрудничества посредством поэтапной организации образовательных программ и углубления специализации деятельности высших учебных заведений.

Статья преследует цель рассмотреть программы совместного регионального и международного исследовательского сотрудничества, совместные и двойные дипломы, обмен студентами и преподавателями в рамках экономической и экономико-географической науки, широко используемой в контексте теории специализации и кооперации.

Ключевые слова: региональная интеграция, виды специализации, специализация по этапам, этапная субспециализация, разделение образовательной программы.

Suren Ohanyan
Rector of Eurasia International University,
Doctor of Geographical Sciences, Professor
Irina Babayan
Vice-President of Educational Affairs EurasiaInternational University

THE REGIONAL-STAGE PROCESSION OF ACADEMIC PROGRAMS AS AN INTERNALIZATION PRECONDITION OF THE UNIVERSITY

Within the scope of international cooperation the higher education system is facing dichotomy. For one thing, there are some financial, political and national obstacles which have caused unstable plight in every country. For another thing, international cooperation is seen as an objective necessity, hereof.

For enhancing the efficiency of academic programs the following article discusses the specialization of higher educational institutions and some theoretical issues concerning the development of regional cooperation by stage procession.

The article reviews joint and double diploma, student and faculty exchange, joint research regional and international programs in the context of the widely used specialization and cooperative theories of economics and economic geography.

Key words: regional integration, types of specialization, stage specialization, stage sub-specialization, differentiation of academic programs.